

ՔՐԻՍՏՈՍԻ Ս. ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ.

«Եւ րդիւսցեց զաւագան յարմատոյն  
Յեսուսայ, եւ ելցեց ծաղիկ յարմատոյ անկի ...  
Եւ եղիցի արդարութիւն ամեալ ընդ մեզ իւր,  
եւ ճշմարտութեամբ պատեալ զիրոյս իւր: Եւ  
ձարակեցեց զայլ ընդ զանիւն, եւ ինձ առ ու-  
րու մակաղեցցիս, եւ որք եւ ցույ եւ անխիժ  
ի միասին ձարակեցցին, եւ մանուկ մասայ  
ածցի զնոսա»:

Եսայի ժԱ. 1, 5, 6:

**Ո**՞վ իւր կեանքում չի ունեցել յա-  
ճախ բողոքներ, երբ ճնշուած ամե-  
նօրեայ հոգսերի ներքոյ, ձանձրացած յեղ-  
յեղուկ բողոքի խաղերից ու աշխարհում թա-  
գաւորող ստուգեան դէմ մաքառելուց, մի  
անպատում վիշտ, մի հեղձուկ թախիժ զգա-  
լով իւր սրտի խորքում եւ դուրսը իւր շրջա-  
պատի մէջ ոչինչ միջիթարութիւն չգտնելով՝  
տենչանօք փափագում է թողնել չհեռանալ,  
մի այլ երջանիկ աշխարհ փոխադրուել, ուր  
անթաւամ գարուն է, հոգսեր չկան, վերա-  
ցուած է ամեն վիշտ ու նեղութիւն մարդիկ  
իրբե անմեղ գառներ են ապրում՝ առանց  
նախանձի, առանց միմեանց զրկելու՝ սիրոյ,  
արդարութեան եւ ճշմարտութեան օրէնքնե-  
րով: Բոլոր հին աղբերի մէջ կան զրոյցներ,  
որոնք այդպիսի մի գեղեցիկ աշխարհի մարդ-  
կութեան կեանքի մի այդպիսի բողոքաւոր

դարեշրջանի պատմութիւնն են անու. բայց  
այդ բոլոր պատմութիւնները երեակայու-  
թեան ծնունդ են լով՝ երբէք չիրականացած  
եւ իսկապէս անիրագործելի ունայն ցանկու-  
թեանց արտայայտութիւն. մինչդեռ վերե  
յառաջ բերած աղբերի մէջ մարդարէն կեն-  
դանի իրականութեան մասին է խօսում՝ մի  
հրաշալի իրականութեան, որի պատկերը գա-  
րեր առաջ տեսել էր նա իւր՝ աստուածային  
իմաստութեան ճառագայթներով լուսաւո-  
րուած, հոգու մէջ, եւ որ մեզ համար պատ-  
կեր չէ այլեւս՝ անհասանելի ազգայնի տնկա-  
լութիւն, այլ անցեալ պատմութեան մի  
պայծառ էջն է, որ շարունակում է կենդանի  
մնալ յաւիտենական ներկայում, որ կարող  
է ամեն բողոք բանալ մեր առաջ իւր բերած  
երանութիւնները:

Յիրաւի ճշմարիտ չէ՞ միթէ, որ քրիս-  
տոնեայն ունի կեանքի այնպիսի ժամեր, երբ  
նա մի երանական աշխարհի մէջ է ապրում,  
որ երկնային խաղաղութիւն եւ անբացատրելի  
հրճուանք կարող է տիրել նորա հոգուն նաև  
այնպիսի ժամանակ, երբ դուրսը ոչ գարուն  
է ծաղկում, ոչ թռչուններ են քաղցր երգում,  
ոչ ծաղիկներ անուշ բուրմունք արձակում, այլ  
զաժան ձմեռն է զուցէ, մառախուղ եւ ցուրտ  
կարիք եւ աղքատութիւն:—Յիշենք այն ան-  
մուսաց երեկոները, երբ մենք դեռ իրբե մա-  
տաղ մանուկներ նաւակատեսաց սեղանի առաջ  
երգում էինք եւ լսում ուրիշ մեզ նման մա-  
նուկների անմեղ երգը. «Խորհուրդ մե՞ծ եւ  
զբանչելի, որ յայսմ առուր յայաննցաւ», այն  
հրաշալի առաւօտները, երբ մեզ զարթեցնում

էին սովորականից վաղ, շատ վաղ, ու ժամ էին ասնու՛մ. դուրսը ցուրան էր, մո՛ւթ, բայց այնտեղ ժա՛նու՛մ հարիւրաւոր, հազարաւոր մոմեր էին վառուում խորհրդաւոր լոյս և ջերմութիւն սփռում... լոյս և ջերմութիւն մեր մանկական հոգւոյ մէջ, որ յաւիտեան անշիջանելի պէտք է մնայ եթէ դառնանք և լինինք կրկին իբրև անմեղ մանուկներ...

Որչափ աւելի գեղեցիկ էր և փառաւոր արդեօք այն երեկոն, երբ այս սքանչելի խորհուրդն առաջին անգամ յայտնուեցաւ աշխարհին, երբ աղքատ մուրբի մէջ գրած էր այն հրաշալի Մանուկը, որ խաղաղութեան իշխան պէտք է լինէր՝ գայլը գառան հետ ճարակել տալով, առիւծը որթի հետ, հաշտ ու հնազանդ, միասեղ վարելով... խիկ հրեշտակները երգում էին վերևից, բայց թեպէտ հովիւները ձայնակցում ներքևից՝ Փա՛նք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն... Որչափ պայծառ էր և գեղեցիկ նաև այն առաւօտը, երբ աստուածային Մանուկը լցեալ արդէն հասակաւ և շնորհօք, բայց հեղ և խոնարհ միշտ իբրև անմեղ մանուկ, իբրև անարատ գառն Աստուծոյ՝ յայտնուեցաւ Յորդանանի խաղաղ ափերում, ապաշխարութեան մկրտութիւն ընդունելու Յովհաննէս Մկրտչից:

Զուր տեղը չէ, որ Հայաստանեայց ս. Եկեղեցին այդ երկու սրբազան յիշատակները միացնում է ի մի անբաժան տօն սուրբ Յայտնութեան. Բեթղեհեմի այրից սկսած մինչև Յորդանանի ափը մի լուսաւոր յայտնութեան անընդհատ շրջան է, որի վերայ երկնքից ծագած Արեգակը խաղաղութեան լոյս է սփռում և մարդոց ի հաճութիւն հրաւիրում՝ հրաւիրում գանել իրենց որոնած երջանկութիւնն այն երանաւէտ աշխարհի մէջ, ուր թագաւորում է արդարութեան և ճշմարտութեան ուսուցիչը՝ մանուկ Բրիստոս, աշխարհի մեղքը իւր վերայ վերցնող Աստուծոյ գա՛ռ Բրիստոս:

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ. \*

«Ակիզքն աւեսարանի Յիսուսի Բրիստոսի Որդոյ Աստուծոյ, որպէս և գրեալ է ի մարգարէս. Անուասիկ ևս ստախեմ գերեշտակ իմ առաջի խոյ, որ հսկեցիքեմսցի գանապարհս քս առաջի խոյ. Չայն բարբառոյ յանապատի պատմանս արարեի գանապարհ Տեսուն և ուղիղ արարեի զշարիսս նորա: Եւ եղև՝ զի Յովհաննէս միբհեր, և քարոզե միբսորիսն ապաշխարութեան ի բողոտրիսն մեղաց»:

Ժամանակակից քննադատների մեծագոյն մասը մեր կանոնական շորս աւետարանների մէջ ամենահինը համարում է Մարկոսի աւետարանը, և ահա այդ աւետարանի սկզբում կարգում ենք յառաջ բերած աղերքը, որոնց ուղիղ իմաստը որոշելու համար դարերի ընթացքում հազարաւոր մեկնաբաններ գործ են դրել իրենց սրամտութիւնը, սակայն դեռ այժմ հաստատ կարելի չէ ասել, թէ նոցա տուած բազմաթիւ բացատրութիւններից ո՞րն է ուղիղը: Առաջին դժուարութիւն պատճառող հանգամանքն այն է, որ թէ յունարէն բնագրի ամենահին ձեռագիրները և թէ թարգմանութիւնները մի քանի կարևոր կէտերում տարբեր ընթերցուածներ են ներկայացնում: Այսպէս՝ փոխանակ «ի մարգարէս» գրեթէ բոլոր հին (ինչպէս նաև հայերէն մի քանի \*\*) ձեռագիրների մէջ կարգում ենք «յեսայի մարգարէս» «և» պակաս է մի քանի նշանաւոր ձեռագիրների մէջ «քարոզիք» բառից առաջ, որով մեծ փոփոխութիւն կարող է յառաջ գալ բնագրի իմաստի մէջ. այլ և մի շարք ձեռագիրներում «Յիսուսի Բրիստոսի» խօսքերից յետոյ պակաս է «Որդւոյ Աստուծոյ», պակաս է բնագրի մէջ հայերէնի «և» ը՛ «եղև զի Յովհաննէս» նախադասութեան սկզբում:

Ընդհանուր առմամբ ներկայ հաստուածը երեք կերպ հասկանալ կարելի է: Սոր մեկնաբաններից շատերը վերջակէտ են գնում՝

\* Ինքն ճակատակ եւնի գնում ստեւեով մի շարք յոյուածներ սկսել, որով պիտի կ ճառայնե աւեսարանի դժուարութեանի կամ բիւրեւացութեանի երկակայ հաստածներ պարզարանելու և նոցա կրօնական-բարոյական բովանդակութիւնը խորհրդածութեանի կիւր պարանելու:

\*\* Տես. Զօհրայիսն նրա. Աստուածաշունչ. Ծան.

